ՄԻՋԱԶԳԱՅԻՆ XIII ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

2008 թ հոկտեմբերի 3-5-ը կայացավ Երեւանյան ***XIII միջազգային Խորհրդաժողովը:***

Այն կազմակերպել էին ՀՀ Սահմանադրական դատարանը, Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական Հանձնաժողովը, «Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանս»-ը, մասնակցությամբ «Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության»:

Թեման՝

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ»

Խորհրդաժողովը բացեց ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը:

Նա ողջունեց մասնակիցներին, կարեւորեց Միջազգային մի շարք կառույցների եւ մոտ երեք տասնյակ երկրների սահմանադրական դատարանների կողմից խորհրդաժողովի հանդեպ ցուցաբերած մեծ հետաքրքրությունը եւ մեր երկրի իշխանությունների վերաբերմունքը, որի վկայություններից է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի եւ իրավունքի ոլորտի մեծ թվով մասնագետների, նախարարների, պատգամավորների, դատախազության աշխատակիցների, գիտնականների, դասախոսների, քաղաքական գործիչների մասնակցությունը:

Իր ողջույնի խոսքում պարոն Հարությունյանը մասնավորապես ասաց.

-Հանրային կյանքի կայուն ու դինամիկ զարգացումը երաշխավորելու նպատակով հասարակական հարաբերությունների սահմանադրականացումը եւ սահմանադրական ժողովրդավարության հաստատումը 21-րդ դարի համար դարձել են այլընտրանք չունեցող քաղաքակրթական կողմնորոշումներ… Ես կարծում եմ, որ այս խորհրդաժողովն առավելապես շեշտը կդնի **հասարակական հարաբերությունների սահմանադրականացման տեսանկյունից սահմանադրական հիմնարար արժեքների եւ հասարակական պրակտիկայի փոխհարաբերությունների բացահայտման ու գնահատման հիմնախնդիրների վրա:** Այս խնդիրն առավել հրատապ է անցումային երկրների համար, որտեղ հասարակական պրակտիկայում տեղի են ունենում նաեւ սահմանադրական հիմնարար արժեքների որոշակի ձեւախեղումներ, որոնք չափազանց մեծ վտանգ են ներկայացնում երկրների ապագայի համար… Դոկտրինալ մակարդակում սահմանադրական հիմնարար արժեքների հստակեցումը եւ Սահմանադրության մեջ ամրագրումը միայն առաջին քայլն է: Այդ քայլն իմաստ ու նշանակություն կարող է ձեռք բերել, եթե այդ արժեքները տվյալ սոցիալական հանրության արժեհամակարգային ընդհանրացումն են ու հասարակության յուրաքանչյուր անդամի համար դառնում են ապրող իրողություն: Ինչպե՞ս հասնել դրան. կարծում եմ, մենք այս խորհրդաժողովում մենք պետք է փորձենք գտնել այդ հարցերի պատասխանները:

Ողջույնի խոսքերով հանդես եկան ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի գլխ. քարտուղար Ջիանի Բուքիքիոն, ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի (OSCE) ղեկավար Սերգեյ Կապինոսը:

ՀՀ նախագահ Սարգսյանն իր ողջույնի խոսքում մասնավորապես նշեց. «Մեր նպատակն է երկրում հաստատել իրական ժողովրդավարություն, կյանքի կոչել

իրավական, սոցիալական պետության կայացման սահմանադրական սկզբունքները, երաշխավորել մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, որպես անմիջականորեն գործող իրավունք: Իսկ դա պահանջում է հետեւողական ու համակարգված աշխատանք: Մեր հաջողություններն էլ ավելի մեծ կլինեն, եթե այս ոլորտներում առավել խորացնենք մեր համագործակցությունը եվրոպական կառույցների հետ, հետեւողականորեն իրականացնենք եվրաինտեգրման ուղղությամբ մեր ստանձնած միջազգային պարտավորությունները, եւ եթե մեր երկրի յուրաքանչյուր բնակիչ, յուրաքանչյուր պաշտոնատար անձ խորապես գիտակցի, որ Հայաստանի համար իրավական, ժողովրդավարական պետություն դառնալն այլընտրանք չունեցող կենսական անհրաժեշտություն է»:

Խորհրդաժողովի առաջին նիստի՝ *«Սահմանադրական հիմնարար արժեքները եւ դրանց իրացման երաշխիքները»* թեմայի շուրջ զեկուցումներով հանդես եկան.

ՀՀ ՍԴ նախագահ, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի անդամ **Գագիկ Հարությունյանը.** *«Սահմանադրական հիմնարար արժեքների իրացման երաշխիքները պետական քաղաքականության մակարդակում և հասարակական պրակտիկայում»*, Բուլղարիայի ՍԴ դատավոր, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի ներկայացուցիչ **Եվգենի Տանչևը**. *«Իրավունքի գերակայությունն ու իրավական պետությունը»*, Ալբանիայի ՍԴ դատավոր **Սոկոլ Բերբերին**. *«Քաղաքացիական հասարակությունը և սահմանադրական արժեքների պաշտպանությունը»,* Ռուսաստանի Դաշնության ՍԴ անդամ **Նիկոլայ Բոնդարը.** *«Սահմանադրական արժեքները որպես սոցիալական հակասությունների և բախումների լուծման դատա-իրավական գործոն»,* Լեհաստանի Սահամադրական տրիբունալի նախագահ **Բոհդան Զժիենիցկին**. *«Սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունն իրավական կարգի փոփոխությունների պարագայում»*, Եվրոդատարանի անդամ **Ալվինա Գյուլումյանը.** *«Սահմանադրական արժեքները և մարդու իրավունքների Եվրոպական դատարանի պրակտիկան»*, Իտալիայի Սիենայի համալսարանի տնտեսական իրավունքի ամբիոնի աշխատակից **Տանյա Գրոպին**. *«Սահմանադրական դատարանի դերը Իտալիայում ժողովրդավարական զարգացման գործում»:*

Հարցերով ու քննարկումներով ավարտվեց առաջին նիստը:

2-րդ նիստի՝ «Սահմանադրական հիմնարար արժեքները սահմանադրական արդարադատության պրակտիկայում» թեմայի շուրջ զեկուցումներով հանդես եկան.

Մոլդովայի ՍԴ նախագահ **Դումիտրու Պուլբերեն**. *«Ժամանակակից սահմանադրականության չափորոշիչների մակարդակով»*, Լատվիայի ՍԴ դատավոր **Վիկտոր Սկուդրան**. *«Լատվիայի Հանրապետության սահմանադրական դատարանի դերը սահմանադրական արժեքների պաշտպանության գործում»,* Իռլանդիայի պետական դատական հետաքննությունների տնօրեն **Ջեյմս Համիլտոնը**. *«Իռլանդիայի Սահմանադրությունում առկա հիմնարար արժեքները և դրանց կիրառությունը»*, Հունգարիայի ՍԴ անդամ **Բարնաբաս Լենկովիչը**. *«Սեփականություն, ազատություն, անվտանգություն»*, Ղազախստանի Սահմանադրական խորհրդի նախագահ **Իգոր Ռոգովը**. *«Սահմանադրական հիմնական արժեքները որպես Ղազախստանի պետական անկախության հիմք»,* Ուկրաինայի ՍԴ անդամ **Յուրի Բաուլինը** (Թեման կներկայացվի ավելի ուշ), Սերբիայի ՍԴ դատավոր **Պրեդրագ Մեսկովիչը**. «*Հիմնական սահմանադրական արժեքները Սերբիայի Հանրապետության սահմանադրական դատարանում»,*

Բելգիայի ՍԴ իրավական հարցերով քարտուղար **Վիլլեմ Վերիխտը**. *«Չեղյալ ճանաչված օրենքի վերականգնում. «Բելգիայի սահմանադրական դատարանն առնչվել է օրենսդիրի ռեցիդիվին»:*

Հարցերով ու քննարկումներով ավարտվեց առաջին օրվա երկրորդ նիստը:

Հոկտեմբերի 4-ին Խորհրդաժողովը շարունակեց իր աշխատանքները:

Օրվա թեման էր. *«Սահմանադրական դատարանների իրավական դիրքորոշումները և հասարակական պրակտիկան»:*

Զեկուցումներով հանդես եկան.

Լիտվայի ՍԴ դատավոր **Ալգիրդաս Տամինսկասը**. *«Սեփականության անձեռնմխելիությունը Լիտվայի Հանրապետության սահմանադրական դատարանի հայեցակարգում»,* Սերբիայի ՍԴ դատավոր **Պրեդրագ Սեփկովիչը**. *«Հիմնական սահմանադրական արժեքները Սերբիայի Հանրապետության սահմանադրական դատարանում»,* Բելառուսի ՍԴ անդամ **Լեոնիդ Ռյաբցևը**. *«Բելառուսի Հանրապետության քաղաքացիների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը»,* Նիկոսիայի շրջանային դատարանի նախագահ **Միխալիս Քրիստոդուլոսը**. *«Դատական իշխանության անկախությունը Կիպրոսում»,* Ղրղզստանի ՍԴ դատավոր **Չինարա Մուսաբեկովան**. *«Ղրղզստանի Սահմանադրությունը և մարդու իրավունքները. նոր փորձություններ»,* Չեխիայի ՍԴ անդամ **Ստանիսլավ Բալիկը**. *«Չեխիայի Հանրապետությունում վարչական արդարադատություն իրականացնելիս կողմերի հիմնարար իրավունքների պաշտպանության գործընթացում ՍԴ-ի և Գերագույն վարչական դատարանի դերը»,* ՀՀ ՍԴ անդամ **Վալերի Պողոսյանը**. *«Դատական իշխանությունը և հասարակությունը»,* Նիդեռլանդների Հարլեմի քրեական դատարանի նախագահ **Հերման Վան Դեն Միերը**. Խորվաթիայի Հանրապետության ՍԴ դատավոր **Մարիո Յելուշիչը**. *«Հիմնարար արժեքները և մարդու իրավունքները Խորվաթիայի Սահմանադրությունում»,* Սլովենիայի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմի վարչության պետ **Առնե Մավչիչը**. *«Սահմանադրական արժեքները պրակտիկայում՝ Սլովենիայի համակարգի օրինակով», Համբուրգի համալսարանի պրոֆեսոր* **Օթթո Լուխտեր Հանդը**. *«Մարդու արժանապատվության հիմնարար արժեքը և դրա նշանակությունը Գերմանիայի Սահմանադրության մեջ»:*

Հարցերով ու քննարկումներով ավարտվեցին Խորհրդաժողովի երկրորդ օրվա նիստերը:

Խորհրդաժողովում արդյունավետ քննարկումներ ընթացան, նոր թեմաներ, նոր խնդիրներ առաջադրվեցին, մասնակիցները կարեւորեցին նման ֆորումների անցկացումը:

Եզրափակիչ ելույթներով հանդես եկան Խորհրդաժողովի նիստերը նախագահողներ՝ **Ջիանի Բուքիքիոն** (Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի գլխավոր քարտուղար), **Գունար Կուդրիսը** (Լատվիայի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ), **Դումիտրու Պուլբերեն** (Մոլդովայի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ), **Իգոր Ռոգովը** (Ղազախստանի Հանրապետության սահմանադրական խորհրդի նախագահ):

Խորհրդաժողովի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը՝ բոլորի շնորհակալություն հայտնելով մասնակցության համար եւ հրավիրելով հաջորդ՝ XIV Խորհրդաժողովին:

Ավարտվեց ֆորումը, բայց քննարկումները կշարունակվեն տեղերում՝ յուրաքանչյուր մասնակից իր հետ տարած տպավորություններով, ձեռք բերած նոր փորձով, նոր հարցականներով, որոնց պատասխանները պիտի գտնվեն կոնկրետ

անելիքներով: Մասնակիցներից յուրաքանչյուրը շուտով կստանա «*Սահմանադրական արդարադատությունը նոր հազարամյակում*» քառալեզու տարեգրքի 2008թ. թողարկումը, ուր ներկա ֆորումում ներկայացված զեկուցումներն են, արծարծված խնդիրներն ու առաջադրված հարցերը:

ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմը XIII Խորհրդաժողովի շրջանակներում հնարավորինս պատշաճ մակարդակով մշակութային մի շարք ծրագրեր իրականացրեց՝ այցելություններ Ծիծեռնակաբերդ, Մատենադարան, Գոշավանք, Գառնի, Գեղարդ եւ Հայաստանի տեսարժան այլ վայրեր:

Խորհրդաժողովում հաճելի անակնկալ էր սպասվում երկու մասնակցի, որոնք պարգեւատրվեցին ՀՀ սահմանադրական դատարանի ոսկե մեդալով: Ջիանի Բուքիքիոն՝ «Սահմանադրական արդարադատության ոլորտում նշանակալի ներդրման, ինչպես նաեւ Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի Հանձնաժողով) եւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի սերտ համագործակցության գործում ունեցած մեծ ավանդի համար, Ղազախստանի Հանրապետության սահմանադրական խորհրդի անդամ, «Конституционное правосудие» միջազգային հանդեսի խմբագրական խորհրդի անդամ Ամանժոլ Նուրմագամբետովը՝ «*Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանս*» միջազգային կազմակերպության «Конституционное правосудие» հանդեսի հրատարակման գործին ակտիվ մասնակցության համար:

Խորհրդաժողովի պաշտոնական լեզուներն էին՝ *հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն:*